ՏԵՂԵԿԱՆՔ

«ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

Հոդված 13.6. Բանկային գաղտնիքի տրամադրումը վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը

1. Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերում բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը բանկային գաղտնիքի հրապարակում չի համարվում:

2. «Հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով և «Տեղական հանրաքվեի մասին» օրենքով սահմանված բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը բանկային գաղտնիքի հրապարակում չի համարվում:

Հոդված 13.7. Բանկային գաղտնիքի տրամադրումը սնանկության գործով կառավարչին

1. Սնանկության օրենսգրքով սահմանված դեպքերում բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների տրամադրումը սնանկության գործով կառավարչին բանկային գաղտնիքի հրապարակում չի համարվում:

Հոդված 14. Բանկային գաղտնիքի շրջանառությունը բանկերի միջև

1. Բանկերը, իրենց գործունեության անվտանգությունը, վարկերի և այլ ներդրումների վերադարձելիությունը ապահովելու, ինչպես նաև փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի նպատակով, կարող են միմյանց, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարկային կազմակերպությունների հետ փոխանակել կամ միմյանց, ինչպես նաև «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված վարկային կազմակերպություններին տրամադրել իրենց հաճախորդների մասին տեղեկություններ, թեկուզև դրանք բանկային գաղտնիք կազմեն:

2. Կենտրոնական բանկը իրավունք ունի բանկերի վերահսկողության ընթացքում, ստանալու և ծանոթանալու բանկերի հաճախորդների վերաբերյալ տեղեկություններին, թեկուզև դրանք բանկային գաղտնիք կազմեն: